ՀԱՅՈՑ ԱՐՏԱՒԱԶԴ Բ. ԹԱԳԱՒՈՐԸ ՀՌՈՄԷԱ-ՊԱՐԹԵՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԳՈՑՑՆԵՐՈՒՄ

ՎՐԷԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Հայոց խորախոհուն ու հելլէնաճաշակ Արտաւազդ Բ. (55-34) թագաւորը՝ իր հօրից՝ Տիգրան Բ. Մեծից (95-55) ժառանգեց ոչ միայն նրա հողմածեծ գահը, այլեւ 66ին ուժեղի պարտադրած հայ-հռոմէական զինադադարը: Այդուհանդերձ, Արտաւազդի օրօք Մեծ Հայքը դեռեւս մնում էր որպէս կարեւոր ռազմաքաղաքական գործօն Արեւելքի երկրների միջ-պետական յարաբերութիւններում: Արտաւազդը կարողացաւ իրատեսօրէն գնահատել ստեղծուած իրադրութիւնը եւ հռոմէա-պարթեւական զինաբախումների ընթացքում վարել իր երկրի շահերից բխող դիւանագիտութիւն:

Հայաստանի հարեւան պարթեւական Իրանը բոլորովին չէր տուժել մ.թ.ա. Ա. դարասկզբի հռոմէա-պոնտական եւ հայ-հռոմէական պատերազմներից, որոնց հետեւանքով Արեւելքում ստեղծուած նոր կացութեան պայմաններում, նա դարձաւ հռոմէական տէրութեան մրցակիցը: Երկու աշխարհակալութիւնների միջեւ դիւանագիտական յարաբերութիւններն սկզբնաւորուել էին 92ին, երբ պարթեւների թագաւոր Միհրդատ Բ.ի (մօտ 123-88/87) բանագնացները ժամանեցին Կապադովկիա եւ Կիլիկիայի հռոմէական կառավարիչ Կորնելիոս Սուլլային առաջարկեցին դաշինք՝ Պոնտոսի թագաւոր Միհրդատ Զ.ի (111-63) դէմ[2]: Սակայն այն չկայացաւ, քանզի Հռոմը չէր հանդուրժում Արեւելքում զօրեղ մրցակցի գոյութիւնը: 66ին Արտաշատում կնքուած հայ-հռոմէական պայմանագրից յետոյ Հռոմի եւ Պարթեւաստանի միջեւ յարաբերութիւնները սրուեցին: 64ին հռոմէական զօրապետ Գնէոս Պոմպէոսը՝ Վրաստանն ու Աղուանքը նուաճելուց յետոյ, զօրք ուղարկեց պարթեւների դէմ, գրաւեց Միջագետքի զգալի մասը[3]: Սակայն, նոյն թուականին, պարթեւներն այնտեղից վտարեցին հռոմայեցիներին՝ դուրս գալով նրանց գրաւած Ասորիքի մատոյցները: Պարթեւական թագաւոր Օրոդէս Բ.ի (55-37) օրօք հռոմէա-պարթեւական յարաբերութիւնները մնում էին լարուած՝ Միջագետքի պատճառով: Հռոմէական կողմը սպասում էր յարմարագոյն պահի՝ Պարթեւաստանի դէմ պատերազմ սկսելու համար:

60ին Հռոմում կազմուած առաջին եռապետութեան ազդեցիկ անդամներից էր Մարկոս Կրասսոսը՝ 74/73-71ի ստրուկների խոշոր ապստամբութեան առաջնորդին՝ Սպարտակին յաղթողը, որն այժմ

ստացաւ Ասորիքը։ Նա ջանում էր գերազանցել եռապետութեան միւս անդամներ Պոմպէոսին եւ Յուլիոս Կեսարին՝ Պարթեւաստանի դէմ յաջող պատերազմի միջոցով ակնկալելով դիւրին յաղթանակ։ Միւս եռապետերը հաւանութիւն տուեցին Կրասսոսի այդ մտայղացմանը[4], թէեւ Հռոմի ծերակոյտը (սենատ) նման յանձնարարութիւն չէր տուել նրան։ Ի զուգակշիռ մ.թ.ա. Դ. դարի մեծ նուաճող Ալեքսանդր Մակեդոնացու, Կրասսոսը կամենում էր գրաւել Արեւելքի բոլոր երկրները, հասնել Հնդկաստան եւ աւելի հեռուն տարածուող երկրներ, որոնց անբաւ հարստութիւնները շլացնում էին նրան։ Հռոմում ժողովրդական տրիբունները վետո դրեցին պարթեւների դէմ նախապատրաստուող պատերազմի վրայ, այն պատճառաբանութեամբ, որ պարթեւները որեւէ անարդարացի քայլ չէին ձեռնարկել հռոմայեցիների նկատմամբ[5]։ Սակայն Կրասսոսը քամահրեց թէ՛ Հռոմի ծերակոյտին, թէ՛ ժողովրդական տրիբուններին եւ 54ի գարնանը իր մօտ 50 հազարանոց զօրքը[6] շարժեց դէպի Փոքր Ասիա եւ Գաղատիայի ու Կիլիկիայի վրայով խուժեց Ասորիք։ 54ի ամրանը, Ջեւգմայի մօտ, նա գետանցեց Եփրատը եւ մտաւ Միջագետք, որտեղ դիւրութեամբ գրաւեց յունական քաղաքները՝ Ապամէան, Խառանը եւն.՝ այնտեղից դուրս վանելով պարթեւներին։ Բայց նա չշարունակեց յաջող սկսած յարձակումը եւ նշուած քաղաքներում թողնելով հռոմէական կայազօրներ (7000 հետեւակ եւ 1000 հեծեալներ) վերադարձաւ Ասորիք, ըստ երեւոյթին լրացուցիչ ոյժեր եւ մթերապաշար հայթայթելու նպատակադրումով։ Ասորիքում նա հանդիպեց որդուն, որը օգնական զօրուժ էր բերել՝ բաղկացած 1000 ընտիր հեծեալներից, որոնց ուղարկել էր Յուլիոս Կեսարը Գալիայից[7]։ Ասորիքում եւ Պաղեստինում Կրասսոսը կատարեց ապօրինի բռնագանձումներ՝ կողոպտելով Հիերապոլիսի եւ Երուսաղէմի տաճարները[8]։

Օրոդէս թագաւորը բանագնացներ ուղարկեց Կրասսոսի մօտ՝ փորձելով հասնել խաղաղութեան եզրերի, բայց արժանացաւ նրա կոպիտ քամահրանքին ու մերժմանը[9]։ Հռոմայեցիների ներխուժումը Միջագետք սպառնալիք էր ստեղծում նաեւ Հայաստանի համար՝ ոչ միայն հռոմայեցիների, այլեւ պարթեւների կողմից։ Այդ պայմաններում, չեզոք դիրքորոշումը Հայաստանը կ՚ենթարկէր հռոմայեցիների յարձակմանը։ Երկրի անվտանգութիւնը ապահովելու նպատակով, 54ի ամրանը, Արտաւազդը թիկնազօրով եւ ուղեկցորդներով մեկնեց Կրասսոսի մօտ՝ Ասորիք, եւ խոստացաւ նրան տրամադրել 10 հազարանոց այրուձի, 30 հազար հետեւազօրայիններ, որոնց պէտք է ապահովէր նաեւ մթերապաշարով։

Յոյն պատմագիր Պլուտարքոսը հաւաստում է, որ Արտաւազդը համոզում էր Կրասսոսին՝ Պարթեւաստան արշաւել Հայաստանի

տարածքով, նկատի առնելով նրա լեռնային տեղանքը, ինչը բացառելու էր պարթեւական հեծելազորի ազատ զորաշարժերի հնարաւորութիւնը՝ ապահովելով հռոմայեցիներին նրա հարուածներից: Սակայն, Կրասսոսն այնքան վստահ էր իր յաղթանակի նկատմամբ, որ մերժեց հայոց թագաւորի առաջարկը[10]:

Արտաւազդի մշակած այս ծրագիրը դիտւում է իբրեւ ոչ-դիւանագիտական մտայղացում, քանի որ դրանով նա «փաստօրէն հիմնովին լծւում էր հռոմէական ռազմական կառքին»[11]: Մէկ այլ կարծիքի համաձայն, Արտաւազդն այս հանդիպման ժամանակ Կրասսոսի հետ համաձայնուել է հայկական զօրուժով միանալ նրա զօրքին՝ դէպի հարաւային Միջագետք՝ Սելեւկիայի վրայ նրա ռազմերթում, եւ որ հայոց թագաւորն իբր թէ նպատակ ունէր սխալ տեղեկատուութեամբ ապակողմնորոշել Կրասսոսին՝ նրան առաջարկելով կանխայայտօրէն անընդունելի ծրագիրը, որի նպատակն էր վիժեցնել վերջինիս վճռական յաղթանակը[12]: Ենթադրւում է նաեւ, որ Կրասսոսի պարթեւական արշաւանքի հենց սկզբից՝ 53ի գարնանից, հայոց եւ պարթեւ թագաւորները նկատի են առել 64ի Տիգրան Բ. Մեծի եւ պարթեւների թագաւոր Հրահատ Գ-ի (70/69-58/57) միջեւ կնքուած դաշինքը՝ ուղղուած Հռոմի դէմ[13]:

Արդ, որ՞ն էր Արտաւազդի ծրագիրը հռոմէա-պարթեւական այս պատերազմի ժամանակ: Պէտք է կարծել, որ Կրասսոսին Հայաստանով արշաւելու առաջարկ անելով, հայոց թագաւորը կամենում էր իր երկիրը ձերբազերծել պարթեւների սպառնալիքից եւ նրանց համոզել, որ Կրասսոսի հետ իր դաշինքը հարկադրական քայլ է՝ կեանքի կոչուած հռոմէական զօրքի Հայաստան ներխուժման հետեւանքով, որի պայմաններում Արտաւազդն այլընտրանք չունէր: Բայց, ինչպէս տեսանք, Կրասսոսը մերժեց հայոց թագաւորի առաջարկը, ուստի վերջինս՝ ցուցաբերելով դիւանագիտական շրջահայեացութիւն, դաշինքի մէջ մտաւ պարթեւների թագաւոր Օրոդէսի հետ, որն արդէն պատերազմ էր ձեռնարկել Հայաստանի դէմ, որպէսզի վերջինս «որեւէ օգնութիւն չուղարկի հռոմայեցիներին»[14]: Օրոդէսն այդպիսով համոզուած էր, որ Արտաւազդը դաշնակցում է հռոմայեցիներին: Հայաստանին սպառնացող ահեղ վտանգի պահին, Արտաւազդը ճիշտ կողմնորոշուեց՝ հաշտութեան եզրեր գտնելով հարեւանի հետ: Խառանի մօտ տեղի ունեցած ճակատամարտում պարթեւները՝ իրենց յոյժ մարտունակ հեծելազօրքով եւ Սուրէն զօրապետի յաջող ռազմավարութեամբ[15], ջախջախեցին Կրասսոսի զօրքին: Պլուտարքոսի վկայութեամբ, Խառանի մօտ ծաւալուած մարտերի ժամանակ, Օրոդէսն «արդէն հաշտուել էր Արտաւազդ Արմէնի հետ»[16]: Պատմագրի «հաշտուել էր» արտայայտութիւնը դարձեալ վկայում է, որ մինչեւ այդ,

պարթեւները պատերազմ էին սկսել Հայաստանի դէմ, նոյնիսկ ներխուժել էին այնտեղ[17]։ Ուստի, խօսք չի կարող լինել Կրասսոսի արշաւանքի հենց սկզբից հայ-պարթեւական դաշնակցութեան մասին։ Ի հարկէ, Արտաւազդը չմասնակցեց Կրասսոսի բանակի դէմ պարթեւների արշաւանքներին, քանի որ դրա հարկը չկար։ Հռոմայեցիներն արդէն պարտուել եւ հեռանում էին Միջագետքից։ Ենթադրւում է, Արտաւազդն «իր հայեցողութեամբ էր պայմանաւորել իրար դիմակայող հակառակորդների՝ Հռոմի եւ Պարթեւաստանի մարտական ոյժերի յարաբերակցութիւնը՝ հռոմայեցիների տակտիկական խոցելիութիւնը եւ Սուրէնի զօրքի գերազանցութիւնը եւ, դրանով իսկ, վերջին հաշուով, պատերազմի ելքը» եւ որ Հայաստանն այդպիսով իբրեւ «երրորդ ոյժ» ի զօրու եղաւ «երկու կռուողներից որոշել յաղթողին»[18]։ Սակայն, ինչպէս տեսանք, Արտաւազդը՝ մինչեւ Կրասսոսի պարտութիւնը, զբաղուած էր իր երկիրը պարթեւների յարձակումից պաշտպանելու հոգսերով։ Պատերազմի ելքը նա չէր կարող որոշել, քանի որ մարտնչող կողմերն իրենից զօրեղ էին։ Թէեւ Արտաւազդը պատերազմի մէջ էր պարթեւների դէմ, բայց յաղթանակ տարան հենց նրանք։ Էլ ինչպէ՞ս նա կարող էր որոշել պատերազմի ելքը։ Պարթեւների հետ նրա դաշինքը կայացաւ այն պահին, երբ ընդհարման ելքն արդէն իսկ վճռուած էր։ Պարթեւների հետ Արտաւազդի դաշինքի նպատակն էր ապահովել Հայաստանի անվտանգութիւնը նրանցից եւ ոչ թէ վերջիններիս միջոցով ջախջախել հռոմայեցիներին, ինչը խիստ կը խախտէր ոյժերի յարաբերակցութիւնն Արեւելքում, ի հարկէ, ոչ յօգուտ Հայաստանի։ Ստեղծուած պայմաններում, չնայած ձեռք բերուած հայ-պարթեւական հաշտութեանն ու դաշինքին, Արտաւազդը պահպանեց չէզոքութիւն եւ բնաւ չմասնակցեց հռոմայեցիների դէմ պարթեւների յետագայ արշաւանքներին։ Բացի այդ, Պլուտարքոսի վերը նշուած վկայութիւնից երեւում է, որ հայ-պարթեւական դաշինքում նախաձեռնողը Օրոդէսն էր։

Կրասսոսն ու նրա զօրականները բնաւ պատկերացում չունէին պարթեւների իրական զօրութեան մասին եւ ակնկալում էին դիւրին յաղթանակ[19]։ Անշուշտ, Օրոդէսն աւելի իրատես գտնուեց եւ կարողացաւ իր կողմը հակել հայոց թագաւորին՝ ապահովելով Միջագետքում մարտնչող իր զօրքերի թիկունքը։ Մինչդեռ Կրասսոսը՝ Օսրոէնէի արաբազգի Աբգար Բ. թագաւորի խորհրդով, ընտրեց Միջագետքի ջրազուրկ ու տանջալից ռազմուղին[20]։ Խառանը Աբգարի թագաւորութեան սահմաններում էր[21] եւ ունէր յոյն բնակչութիւն։ Կրասսոսը յոյս ունէր, որ ոչ միայն յունական քաղաքները, այլեւ բովանդակ Միջագետքը կարող են իր ձեռնարկումների համար յուսալի յենարան դառնալ Աբգարի եւ այնտեղ՝ յունական քաղաքներում իր թողած հռոմէա-

կան կայազօրների եւ բնակչութեան զօրակցութեան շնորհիւ։ Նա կարծում էր, որ առաւել կարճ ճանապարհով ի զօրու կը լինի հարուածել պարթեւական պետութեան սրտին եւ դուրս գալ Տիգրոն մայրաքաղաք։ Սակայն, Խառանում արդէն պարզ դարձաւ, որ հռոմէական զօրքը յայտնուել է անդունդի եզրին։ Բնականաբար, ո՛չ Արգարը եւ ո՛չ էլ Հռոմի միւս դաշնակիցները չէին կամենայ Կրասսոսի զինուորների հետ գահավիժել անդունդ։ Ճակատամարտի հենց սկզբում, երբ պարթեւները ոչնչացրին Կրասսոսի որդու՝ Պուբլիոսի ջոկատը՝ սպանելով նաեւ նրան, հռոմէական զօրքում բոյն դրած բարոյալքումն աւելի ուժեղացաւ։ Հոգով ընկճուած էր նաեւ Կրասսոսը[22]։ Հռոմէական զինուորներն ողջամտօրէն նրան էին համարում «մեղաւոր բոլոր չարիքների համար»,- գրում է Պլուտարքոսը[23]։ Պուբլիոս Կրասսոսի ջոկատի ոչնչացումը թէեւ ժամանակաւորապէս թուլացրեց հռոմէական հիմնական զօրուժի վրայ պարթեւների գործադրած ճնշումը[24], սակայն, Խառանի մօտ, վերջիններս փաստօրէն շրջափակեցին հռոմայեցիներին եւ Կրասսոսն ուշացումով հասկացաւ թէ ճակատագրական ինչ սխալ է թոյլ տուել՝ արշաւուղի ընտրելով Միջագետքում։ Նա փորձեց Խառանից, զօրքի մի մասով ճողոպրել եւ դուրս գալ Հայաստան։ Նրանք, հաւաստում է Բ.-Գ. դարերի ծագումով յոյն, հռոմէական պատմագիր Դիոն Կասսիոսը, «ապաստանեցին լեռները, որպէսզի դրանց վրայով փախչեն Հայաստան»[25]։ Կրասսոսի զօրայիններից ոմանք նրան համոզում էին «հրաժարուել հայերից սպասուող օգնութեան հեռաւոր եւ ապարդիւն յոյսերից» եւ փախչել ուրիշ վայրեր[26]։ Կրասսոսը կը նահանջէր դէպի Հայաստան, եթէ հանգամանքները թոյլ տային։ Սուրէն զօրապետը՝ հաւանօրէն կռահելով նրա դիտաւորութիւնը, հաշտութեան առաջարկ արեց հռոմայեցիներին։ Կրասսոսը թէեւ հրաժարուեց, բայց զօրքը պահանջեց հաշտութիւն կնքել[27]։ Սակայն, Խառանի մօտ հռոմայեցիների կրած պարտութիւնից յետոյ որեւէ հաշտութիւն չկնքուեց եւ ախոյեան կողմերի միջեւ շարունակուեց պատերազմական դրութիւնը[28]։ Հռոմէական Արեւելքը փաստօրէն զրկուեց զօրուժից, եւ պարթեւների առջեւ ճանապարհ բացուեց Ասորիք ներխուժելու համար[29]։ Նրանք կամենում էին գրաւել այն երկիրները, որոնք յենարան էին ծառայել Կրասսոսի արշաւանքի համար։

51ին, պարթեւները՝ արքայազն Բակուրի գլխաւորութեամբ, խուժեցին Ասորիք, որի բնակչութիւնը դժգոհ լինելով հռոմէական գերիշխանութիւնից, գրկաբաց ընդունեց պարթեւներին, «որոնք թէ՛ հարեւաններ էին ու թէ՛ սովորոյթներով մօտիկ»[30]։

Այս պատերազմների ժամանակ նոյնպէս, Արտաւազդը չէզոքութիւն պահպանեց, ինչն, անշուշտ, նրա անկախ դիրքի վկայութիւնն է։ Ի հարկէ, նրա դիրքորոշումը նպաստում էր պարթեւների վարած

պատերազմներին՝ ապահովելով նրանց թիկունքը։ Հռոմայեցիները նոյնիսկ երկիւղում էին, որ նա կարող է դաշնակցել պարթեւների հետ՝ ընդդէմ իրենց։ 51-50ին Կիլիկիայում հռոմայեցի կառավարող, հռետոր, գրող ու քաղաքական գործիչ Կիկերոնը ծերակոյտին յղած իր նամակներից մէկում գրում է, որ հռոմէական զօրքը մտել է Կապադովկիա, որպէսզի հայոց թագաւոր Արտաւազդը տեղեկանայ, որ «հռոմէական բանակը հեռու չէ իր երկրի սահմաններից»[31]։ Պարթեւների Ասորիք ներխուժումից յետոյ ծագեց Կիլիկիայի վրայ նրանց յարձակման վտանգը, ուստի Կիկերոնը դիմեց կանխող քայլերի՝ հայերի ու պարթեւների հնարաւոր դաշինքը վիժեցնելու համար[32]։

Ենթադրւում է, թէ հռոմէա-պարթեւական այս պատերազմներին մասնակցում էր նաեւ հայոց զօրքը[33]։ Պարթեւական զօրքերի հրամանատարը հմուտ եւ փորձուած զօրապետ Օսակէսն էր, որին յիշում է Դիոն Կասսիոսը, չնչելով նրա ազգութիւնը[34]։ Պատմաբան Գրիգոր Խալաթեանի կարծիքով Օսակէսը հայազգի էր՝ Վասակ անունով[35]։

Արտաւազդը զգուշաւոր քաղաքականութիւն էր վարում նաեւ կեսարականների եւ պոմպէոսականների միջեւ արծարծուած պայքարի ընթացքում։ Մ.թ. Բ. դարի ծագումով յոյն, հռոմէական պատմիչ Ապպիանոսի մի վկայութեան համաձայն, Արտաւազդը օգնական զօրք է ուղարկել Պոմպէոսին[36], թերեւս յարգելով վերջինիս հետ 66ին Արտաշատում իր հօր կնքած պայմանագիրը։ Պոմպէոսին Արտաւազդի զօրակցելու փաստը հարկադրական քայլ էր, որի նպատակն էր Հայաստանը գերծ պահել հռոմէական նոր ներխուժումից։ Արտաւազդը շրջահայեաց դիւանագիտութեամբ չի սրել յարաբերութիւնները նաեւ կեսարականների հետ, ուստի վերջիններս թշնամական քայլերի չդիմեցին Հայաստանի հանդէպ։ սա այն դէպքում, երբ Յուլիոս Կեսարը՝ ժամանելով Արեւելք, պատժեց այն թագաւորներին, ովքեր սատարել էին Պոմպէոսին։ Հաւանաբար, նա Հայաստանը դիտում էր որպէս իր հնարաւոր դաշնակիցը Պարթեւաստանի դէմ նախատեսուող արշաւանքում, որն, ըստ Պլուտարքոսի, նա ծրագրել էր սկսել Հռոմում քաղաքացիական պատերազմի աւարտից յետոյ[37]։ Կեսարը նպատակադրել էր ստեղծել համաշխարհային տէրութիւն[38], որի մէջ Հայաստանը հաւանաբար չէր ընդգրկուելու[39]։ Ընդսմին նշուած էր նաեւ Պարթեւաստան արշաւելու որոշակի օրը։ Սակայն, դրանից չորս օր առաջ՝ 44ի Մարտի 15ին, Կեսարը եղերամահ եղաւ հանրապետականների նիւթած դաւի հետեւանքով։

Կեսարի սպանութիւնից յետոյ Հռոմի ծերակոյտը արեւելեան նահանգների կառավարումը վերապահեց հանրապետականների պարագլուխներ Գայիոս Կասսիոսին եւ Մարկոս Բրուտոսին, որոնք ջանացին տարածաշրջանում ամրակայել Հռոմի գերիշխանութիւնը[40]։ Ապպիա-

նոսը վկայում է, որ պարթեւական հեծելազօրի մի զօրաբաժին օժանդակում է նրանց[41]: Անշուշտ, քաղաքացիական պատերազմի բորբոքումը ձեռնտու էր պարթեւներին, քանի որ հիւծում էր ահարկու ախոյեանի ոյժերը: Գայիոս Կասսիոսը հաշուեյարդար տեսաւ կեսարականներին սատարող արեւելեան թագաւորների նկատմամբ: Պատժից չխուսափեց նաեւ Կապադովկիայի Արիոբարզանէս թագաւորը[42]: Երկիւղելով իրենց երկիրների դէմ հնարաւոր պատժարշաւից, Եգիպտոսի Կլէոպատրա է. թագուհին, Հրէաստանի Հերովդէս թագաւորը եւ արեւելեան ուրիշ գահակալներ զինական օգնութիւն ցոյց տուեցին հանրապետականներին[43]:

Այս իրադարձութիւնների ընթացքում Արտաւազդը կարողացաւ չեզոքութիւն պահպանել՝ չյարուցելով ախոյեան կողմերից որեւէ մէկի թշնամանքը Հայաստանի հանդէպ: Այսպիսով, Հայաստանը՝ չնորհիւ հայոց թագաւորի շրջահայեաց դիւանագիտութեան, պահպանեց իր անկախ դիրքն ու ամբողջականութիւնը: Մէջ հանրապետականները եւ ո՛չ էլ կեսարականների պարագլուխ Մարկոս Անտոնիոսը դոյզն իսկ փորձ չարեցին միջամտելու Հայաստանի ներքին գործերին:

Բոլորովին այլ էր Օրոդէսի դիրքաւորումը Անտոնիոսի գործողութիւնների նկատմամբ, քանի որ դրանք սպառնում էին Պարթեւաստանի շահերին Ասորիքում եւ յարակից երկրաշրջաններում, որոնց նկատմամբ յաւակնութիւններ ունէին նաեւ պարթեւները: Օգտուելով Յուլիոս Կեսարի սպանութիւնից յետոյ Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ արծարծուող պայքարից, Օրոդէսը 41ի վերջին մեծ զօրք առաքեց Ասորիք՝ վերստին Բակուրի գլխաւորութեամբ: Բայց Անտոնիոսի զօրապետ Վենդետիոսը ջախջախեց «թշնամուն, նրան վիթխարի կորուստներ պատճառելով: Առաջին սպաննուողներից մէկը եղել է ինքը՝ Պակորոսը (այսինքն՝ Բակուրը — Վ.Վ.): Այս յաղթանակով ... հռոմայեցիները լիովին լուծեցին Կրասսոսի կործանման վրէժը եւ վերստին հեռու քշեցին պարթեւներին»,- գրում է Պլուտարքոսը[44]:

Հռոմէա-պարթեւական այս զինաբախումների ժամանակ Արտաւազդն օժանդակութիւն ցոյց չտուեց պարթեւներին, չնայած որ նրանց դարձեալ գլխաւորում էր իր քրոջ ամուսին Բակուրը: Արտաւազդը կողմ չէր պարթեւների հզօրացմանը, քանի որ նրանց առաջխաղացման ճանապարհին ընկած էր նաեւ Հայաստանը, որը կարող էր նուաճուել պարթեւների կողմից: Բացի այդ, հայոց թագաւորը գիտէր, որ զօրակցելով պարթեւներին յարուցելու է հռոմայեցիների թշնամանքը: Նա հաւանաբար վստահ չէր Ասորիքում եւ յարակից շրջաններում պարթեւների յաղթանակի նկատմամբ[45]: Այս անգամ եւս հայոց թագաւորի դիւանագիտական հաշուարկներն արդարացան: Դրանց չնորհիւ ո՛չ Վենդետիոսը եւ ո՛չ էլ 38ին նրան փոխարինած Մարկոս

Անտոնիոսը Հայաստանի հանդէպ որեւէ թշնամական քայլ չձեռնարկեցին, մինչդեռ նրանք խստագոյնս հաշուեյարդար տեսան պարթեւներին դաշնակցած փոքրասիական տիրակալների նկատմամբ[46]:

Յուլիոս Կեսարի սպանութիւնից յետոյ, ինչպէս նշեցինք, նրա կողմնակիցների միջեւ ծագած գժտութիւնները վերածուեցին անհաշտ մրցապայքարի, որը մղւում էր Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ: Սրանցից իւրաքանչիւրն իրեն էր համարում Կեսարի միակ իրաւայաջորդը[47], ինչի համար երկուսն էլ շահարկում էին նաեւ վերջինիս հետ իրենց ազգակցութեան փաստը: Սակայն, 43ին նրանք հաշտուեցին եւ Մարկոս Լեպիդոսի հետ կազմեցին երկրորդ եռապետութիւնը, դաժանաբար հաշուեյարդար տեսնելով իրենց հակառակորդների նկատմամբ[48]: Այս ընթացքում սպանուեց նաեւ Անտոնիոսի երդուեալ թշնամի Կիկերոնը: Եռապետութեամբ փաստօրէն վերացաւ Հռոմէական հանրապետութիւնը եւ Հռոմի պատմութեան մեջ բացուեց նոր դարագլուխ: Արեւելքն այս անգամ բաժին ընկաւ գեղծաբարոյ Անտոնիոսին: Այստեղ, նրա անսանձ ու մոլեկիրք նկրտումներն ազատ եւ անկաշկանդ դրսեւորուեցին: Անտոնիոսը որոճում էր հեռահար ծրագրեր, երազելով գրաւել Ալեքսանդր Մակեդոնացու նուաճած երկրները, ի հարկէ, առաջին հերթին՝ յաղթանակ տանել պարթեւների նկատմամբ, ինչը կ'ապահովէր նրա առաջնութիւնը իր մրցակից Օկտաւիանոսի հանդէպ նաեւ Արեւմուտքում[49]: Մինդեռ վերջինս դէմ չէր Անտոնիոսի պարթեւական արշաւանքին, որը նրա կարծիքով շեղելու էր Անտոնիոսի ուշադրութիւնը Արեւմուտքի գործերից[50]:

Անտոնիոսին որոշակի յոյս էին ներշնչում ոչ միայն Վենդեոիոսի յաղթանակը պարթեւների դէմ, այլեւ վերջիններիս վերնախաւում տեղի ունեցող գժտութիւնները, որոնք ծայր էին առել Բակուրի կրած պարտութիւնից յետոյ, երբ Օրոդէսը հեղինակազրկուելով հրաժարուել էր գահից յօգուտ իր 30 որդիներից աւագի՝ Հրահատ Դ-ի (38/37-2), որն իշխանութեան անցնելուց յետոյ սպանել տուեց իր բոլոր եղբայրներին ու հօրը[51]: Հրահատ Դ. փորձեց հաշտութիւն կնքել Անտոնիոսի հետ, որն առերես ընդունեց նրա այդ առաջարկը, ի հարկէ, նրան մոլորեցնելու միտումով: Իսկ երբ պարթեւները վերադարձրին Կրասսոսի պարտութեան պատճառով գերեվարուած հռոմայեցի զինուորներին եւ հռոմէական դրօշները, Անտոնիոսը պատրաստուեց արշաւել Պարթեւաստան[52]: Արշաւանքի համար նիւթական միջոցներ ապահովելու նպատակով, 37ին նա պաշտօնապէս ամուսնացաւ իր հմանուհու՝ Կլէոպատրա թագուհու հետ, որն իր հերթին յոյս ունէր այդ կերպ պահպանել Եգիպտոսի անկախութիւնը եւ այնտեղ՝ Անտոնիոսի սատարմամբ, ամրապնդել իր իշխանութիւնը: Կլէոպատրան նիւթական եւ զինական լայն աջակցութիւն ցոյց տուեց նրան:

Անտոնիոսին ստիպուած դաշնակցեցին նաեւ Հայաստանի, Իբերիայի եւ Աղուանքի թագաւորները[53]: Սակայն Արտաւազդն այդ դաշինքից յետոյ եւս պահպանեց իր երկրի անկախութիւնը, նոյնիսկ հօրից ժառանգած «արքայից արքայ» պատուատիտղոսը[54]:

Անտոնիոսը յոյս ունէր, որ դաշնակիցների աջակցութեամբ կարող է ջախջախել եւ մասնատել Պարթեւաստանը՝ Արեւելքում գերիշխանութեան համար Հռոմի ու պարթեւական պետութեան միջեւ մղուող պայքարի հարցը լուծելով յօգուտ հռոմայեցիների[55]: Հաւանաբար, Անտոնիոսը կամենում էր օգտուել Ցուլիոս Կեսարի կողմից մտայղացուած պարթեւական արշաւանքի պլանից, որը նախատեսում էր արշաւել Հայաստանով եւ հիւսիսից հարուածել Պարթեւաստանին[56]: Նա կամենում էր մինչեւ Օկտաւիանոսի եւ նրա ախոյեան Սեքստոս Պոմպէոսի՝ Գնէոս Պոմպէոսի որդու, միջեւ Արեւմուտքում բորբոքուած պայքարի հանգուցալուծումը, յաղթանակ տանել պարթեւների դէմ: Այդպիսի յաղթանակ յոյժ կը բարձրացնէր իր հեղինակութիւնը Հռոմում եւ ի դերեւ կը հանէր Օկտաւիանոսի ազդեցութիւնը: Վերջինս հաշուի էր առնում այդ հանգամանքը, ուստի ջանում հականերգործել Անտոնիոսի ձեռնարկումներին: Ըստ երեւոյթին, նա կարողացաւ Արտաւազդի հետ համաձայնութիւն կնքել ընդդէմ Անտոնիոսի, հաշուի առնելով Հայաստանի վճռորոշ դերը պարթեւական արշաւանքի ընթացքում[57]: Այս համաձայնութիւնը եւս որոշակի դեր խաղաց Անտոնիոսի հանդէպ Արտաւազդի դիրքորոշման պահին: Այստեղ եւս դրսեւորուեց Արտաւազդի ռազմական եւ դիւանագիտական կարողունակութիւնը: Նա կռահեց, որ Անտոնիոսը կրկնակի պարտութեան եզրին է թէ՛ պարթեւական ռազմաբեմում, թէ՛ Օկտաւիանոսի դէմ մղուելիք պայքարում: Նկատենք, որ նոյն 36ին, երբ Անտոնիոսը զօրքերը շարժեց Պարթեւաստանի դէմ, Օկտաւիանոսը վճռական յաղթանակ տարաւ Արեւմուտքում իր հակառակորդների դէմ, դառնալով Իտալիայի լիիշխան տիրակալը եւ յոյժ մեծացնելով իր ռազմական եւ նիւթական հնարաւորութիւնները: Այս հանգամանքն Անտոնիոսին ստիպեց արագացնել պարթեւական արշաւանքը, աճապարանքի կնիք թողնելով իր յետագայ ձեռնարկումների վրայ: Նա թերագնահատեց ժամանակի գործօնը, որից չարաչար տուժեց[58]:

36ի գարնանը Անտոնիոսը Եգիպտոսից ժամանեց Ասորիք, որտեղ կենտրոնացրեց մեծաստուար զօրք՝ պարթեւների դէմ արշաւելու համար: Այնուհետեւ նա Մելիտենէով, Փոքր Հայքով եւ Սատաղով ուղղուեց Մեծ Հայք եւ՝ շարժուելով Եփրատի հովտով, հասաւ Երգնկա, ապա Կարին, որտեղ պէտք է հաւաքուէին նրա զօրքերը, այդ թւում՝ դաշնակից արքաների տրամադրած զօրաբաժինները, որոնք «մեծ թիւ էին կազմում, եւ նրանց մէջ առաջին տեղը պատկանում էր

Հայոց Արտաւազդին»,- գրում է Պլուտարքոսը[59]: Կարինից Անտոնիոսի զօրքը՝ Սուկաւէտ (այժմ Քէօսէդաղ) լերան հարաւակողմով շարժուելով, հասաւ Դարոյնք, որտեղից դիմեց դէպի Ջուղա, իսկ այնտեղից մտաւ Վասպուրականի Բաքրան գաւառը եւ Մարանդ քաղաքով հասաւ Ուրմիա լիճ, որի արեւելեան ափեզերքով՝ շարժուելով դէպի հարաւ, հասաւ Մարաղա քաղաքը, այնտեղից՝ Ատրպատականի Գանձակ շահաստանը եւ Փրաասպա քաղաքը, որն ունէր ամրանիստ բերդ[60]: Այստեղից նա ծրագրել էր շարժուել դէպի Եկբատանա (յետագային՝ Համադան) եւ կործանել պարթեւական պետութիւնը[61]: Գերմանացի պատմաբան Թէոդոր Մոմզէնը ենթադրում է թէ Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ռազմուղին կանխաւ նրան յուշեց Արտաւազդը, քանի որ հայոց թագաւորները միշտ կամենում էին գրաւել Ատրպատականը եւ այժմ նա եւս կարող էր նման յոյս ունենալ[62]: Դիոն Կասսիոսը գրում է, որ Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ժամանակ Ատրպատականի թագաւորը թշնամի էր Մեծ Հայքի Արտաւազդ թագաւորին[63]: Պատմաբան Ռուբէն Մանասերեանի կարծիքով, Արտաւազդի դերը վճռորոշ էր Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ուղղութեան ծրագրաւորման ու իրականացման գործում, եւ որ Փրաասպայի անպաշտպան վիճակի մասին հռոմայեցիները կեղծ տեղեկութիւններ էին ստանում ոչ թէ իրենց հետախոյզներից, այլ Հայաստանից[64]: Այս կարծիքի հետ հնարաւոր չէ համաձայնուել, քանի որ նախ, ինչպէս հաւաստուած է հռոմայեցի պատմագիրների մօտ, Փրաասպան անպաշտպան չէր եւ կատաղի դիմադրութիւն ցոյց տուեց՝ իր պարիսպների տակ կործանիչ հարուածներ հասցնելով Անտոնիոսի զօրքին[65]: Եթէ իրօք Անտոնիոսի ներխուժումը Ատրպատական նպաստելու էր Արտաւազդի տարածքային յաւակնութիւններին, ապա բնական կը լինէր, որ վերջինս ո՛չ թէ ստապատիր տեղեկութիւններով ապակողմնորոշէր հռոմայեցիներին եւ պարտութիւն պատճառէր նրանց, այլ, ընդհակառակը, նպաստէր նրանց յաղթանակին: Բացի այդ, Արտաւազդը հարկ է, որ մասնակցէր Ատրպատականի դէմ հռոմայեցիների ձեռնարկած արշաւանքին: Մինչդեռ նա, ինչպէս վկայում է Դիոն Կասսիոսը, «ներկայ չեղաւ կռուին, բայց եւ ինչպէս ասում են ոմանք, նա կարող էր օգնել հռոմայեցիներին, սակայն ոչ այդ արեց, ոչ էլ եկաւ Անտոնիոսի մօտ, այլ մեկնեց տուն»[66]:

Հարկ է նշել, որ հենց սկզբից Անտոնիոսի պարթեւական արշաւանքը դատապարտուած էր ձախողման: Անտոնիոսը այնքան վստահ էր յաջողութեան նկատմամբ, որ իր ետեւում թողեց Ստատիանոսի 10 հազարանոց զօրաբաժինը՝ պաշարողական մեքենաներով, որոնք յոյժ անհրաժեշտ էին քաղաքի պաշարման համար, ու շարժուեց Փրաասպայի վրայ՝ պաշարելով այն: Օգտուելով դրանից, Հրահատ Դ. ոչնչաց-

րեց Ստատիանոսի զօրախումբը՝ պաշարողական մեքենաներով հանդերձ, գերի վերցնելով նաեւ Պոնտոսի Պոլեմոն թագաւորին, ապա զօրքը նետեց Փրաասպա՝ նրա պաշտպաններին զօրակցելու համար։ Ստատիանոսի զօրաբաժնի ջախջախումից յետոյ, հաւաստում է Պլուտարքոսը, Անտոնիոսն ու իւրայիններն ընկան խորին յուսալքման մէջ, իսկ «Հայոց թագաւոր Արտաւազդը, հռոմայեցիների գործը համարելով տանուլ տրուած, հաւաքեց բոլոր իւրայիններին եւ հեռացաւ, թէեւ պատերազմի գլխաւոր մեղաւորը հենց ինքն էր»[67]։ Ստրաբոնը նոյնպէս Անտոնիոսի պարտութեան պատճառ է համարում Արտաւազդին[68]։ Ստրաբոնի համար, ինչպէս ինքն է նշում, աղբիւր է ծառայել «Անտոնիոսի բարեկամ» Դելլիոսի հաղորդածը, «որը նկարագրեց նրա արշաւանքը Պարթեւաց դէմ, ուր ներկայ էր նաեւ ինքը եւ մասնակցեց իբր զօրապետ»[69]։ Հասկանալի է, որ Դելլիոսը չէր կարող կողմնակալ չլինել։ Նա պէտք է թիւրէր ճշմարտութիւնը եւ իր բարեկամ Անտոնիոսին եւ նրա զօրապետերին (անշուշտ, նաեւ իրեն) մեղսագերծէր եւ, ինչպէս հռոմայեցի զօրապետերի սովորութիւնն էր, պարտութեան մեղքը բարդէր ուրիշների վրայ, մանաւանդ որ Անտոնիոսի ախոյեան Օկտաւիանոսը նրան մեղադրում էր ազգային դաւաճանութեան մէջ։

Միայն Արտաւազդը չէր, որ հասկացաւ Անտոնիոսի ռազմա-քաղաքական ձախողանքի անխուսափելիութիւնը։ Անյաջողութիւնները յուսաբեկեցին նաեւ հռոմայեցի զինուորներին։ Ուստի, Անտոնիոսը փորձեց հաշտութեան եզրեր գտնել Հրահատ Դ-ի հետ։ Վերջինս տուեց իր համաձայնութիւնը, պայմանով, որ հռոմայեցիներն անյապաղ հեռանան իր երկրից[70]։ Սակայն, հռոմէական զօրքի նահանջի երրորդ օրը, պարթեւները յարձակուեցին նրանց վրայ՝ ջանալով շրջապատել եւ ոչնչացնել նրանց[71]։ Պարթեւներն իրենց յարձակումները շարունակեցին նաեւ յաջորդ օրերին։ Անընդմէջ ընդհարումների պատճառով Անտոնիոսի զօրքը մատնուեց ծանր կացութեան։ Նրա սովալլուկ զինուորները, ինչպէս վկայում է Պլուտարքոսը, ստիպուած սնւում էին խոտերով՝ յաճախ թունաւորուելով մահացու բոյսերից։ Սովից եւ հիւանդութիւններից «հռոմայեցիները մահանում էին անթիւ ու անհամար, իսկ պարթեւները մշտապէս հետեւում էին նրանց»[72]։ Մարդ ցեղից մի ուղեկցորդի օգնութեամբ հռոմայեցիները նահանջում էին դէպի Հայաստան, անշուշտ, համոզուած լինելով, որ հայոց թագաւորը չի խզել դաշնակցային յարաբերութիւններն իրենց հետ։ 27օրեայ նահանջի ընթացքում Անտոնիոսի զօրքը 18 անգամ ստիպուած էր մարտի բռնուել պարթեւների հետ։ Վերջիններս հետապնդումը դադարեցրին միայն այն ժամանակ, երբ հռոմէական զինուորները ոտք դրեցին Հայաստանի սահմանները[73]։ Հաւանաբար, պարթեւները համո-

զուած էին որ հայերը թշնամի չեն հռոմայեցիներին եւ հարկ եղած դէպքում կարող են աջակցել նրանց[74]։

Սովահալած ու տանջարեկ հռոմայեցիները հայոց երկրում զգացին, որ փրկուած են դաժան պատահարներից։ Հայոց հողում «Ներանք,- գրում է Պլուտարքոսը,- համբուրում էին քարերն ու աւազը եւ, իրար գրկելով, ուրախութիւնից լաց լինում ... ընթանալով հարուստ ու ծաղկուն երկրի մէջ»[75]։ Այս փաստերը մէկ անգամ եւս վկայում են, որ Արտաւազդն անգամ Հռոմի հետ Հայաստանի դաշինքի պայմաններում իրեն ազատ էր զգում եւ վարւում էր սեփական հայեցողութեամբ՝ նախընտրելով չէզոքութիւնը։ Եթէ նա պարթեւների հետ դաշինքի մէջ լինէր, հարկ է, որ յարձակուէր իր երկիր մտած հռոմէական զօրքի վրայ[76], բայց, ինչպէս տեսանք, նա այլ կերպ վարուեց։

Անտոնիոսը Հայաստանում զօրատես արեց, որի ժամանակ պարզուեց, որ իր զօրքը կորցրել է 20 հազար հետեւակ եւ չորս հազար հեծեալ զինուորներ։ Դրանց կէսից աւելին զոհ էին գնացել տարափոխիկ հիւանդութիւնների։ Բայց այդ փաստը բնաւ չսթափեցրեց Անտոնիոսին։ Հակառակ Հայաստանի «դաժան ձմրանն ու անընդհատ տեղացող ձեանը,- գրում է Պլուտարքոսը,- նա չտապեց առաջ գնալ եւ ճանապարհին կորցրեց եւս 8 հազար զինուոր»[77]։ Աւելին, նա բաժանուեց իր զօրքից եւ փոքր թիկնազօրով հասաւ Միջերկրականի ծովափ, Բերիտոս (այժմ՝ Բէյրութ) եւ Սիդոն քաղաքների միջեւ ընկած մի գիւղում սպասելով Կլէոպատրային, որի օգնութեամբ նա յոյս ունէր համալրել իր գանձարանը։ Անտոնիոսը նման ակնկալիքներ չէր կարող ունենալ հայոց թագաւորից։

Անտոնիոսը կամենում էր ստուարացնել իր ուժերը եւ վերստին արշաւել պարթեւների դէմ։ Այս անգամ նրան յոյս էր ներշնչում այն, որ Ատրպատականի Արտաւազդ թագաւորը դաշնակցում էր իրեն, քանի որ ռազմաւարի բաժանման պատճառով գժտուել էր Հրահատ Դ-ի հետ։ 35ին Արտաւազդ Մեղացին դաշինք կնքելու առաջարկով Անտոնիոսի մօտ առաքեց Պոնտոսի Պոլեմոն թագաւորին՝ հռոմայեցիների երբեմնի դաշնակցին, որը 36ին կռիւների ժամանակ գերի էր ընկել պարթեւներին։ Պոլեմոնի միջոցով, Ատրպատականի արքան, ինչպէս հաղորդում է Պլուտարքոսը, իր մօտ հրաւիրեց Անտոնիոսին, խոստանալով սատարել հռոմայեցիներին իր «ամբողջ զօրքով»։ Այդ առաջարկը ոգեպնդեց Անտոնիոսին, քանզի,- շարունակում է պատմագիրը,- «եթէ նախորդ անգամ պարթեւներին յաղթելու համար իրեն պակասում էր, ըստ երեւոյթին, միայն մի բան՝ նետ ու աղեղով զինուած մեծաթիւ հեծելազօր, ապա այժմ այն կը լինէր իր տրամադրութեան տակ»[78]։ Այս անգամ եւս Անտոնիոսը կամենում էր արշաւել Հայաստանով։ «Նա,- ինչպէս վկայուած է դարձեալ Պլուտարքոսի

մօտ,- արդէն պատրաստուում էր եւս մէկ անգամ անցնել Հայաստանով, որպէսզի, Արաքս գետի մօտ միանալով մարերի հետ, ռազմական գործողութիւններ սկսի» յաջորդ գարնանը[79]: Անտոնիոսն անձամբ ժամանեց Ատրպատական եւ նրա թագաւորի հետ կնքեց բարեկամական դաշնագիր[80]: Նա յոյս ունէր, որ նման դաշինք կարող է պարտադրել նաեւ հայոց թագաւորին: Այդ նպատակով նա արշաւեց Հայաստան՝ «մեծապէս յոյս դնելով» Արտաւազդ Մեդացու վրայ, որը «կամենում էր (Արտաւազդ) Արմէնին պատժել հռոմայեցիներին (իր երկրի դէմ) բերած լինելու համար»,- գրում է Դիոն Կասսիոսը[81]: Հասկանալի է, որ նման իրավիճակում Անտոնիոսի յարաբերութիւնները Արտաւազդի հետ չէին կարող բարեկամական լինել: Այդուհանդերձ, Անտոնիոսին չէր կարող չմտահոգել Արտաւազդի եւ Հրահատ Դ-ի դաշինքի հնարաւորութիւնը, ուստի նա փորձեց կանխել այն, հայոց թագաւորին հրաւիրելով իր մօտ՝ Ալեքսանդրիա՝ «իբրեւ բարեկամի, որպէսզի նրան առանց դժուարութեան ձեռք գցելով, այնտեղ ոչնչացնի. բայց քանի որ սա կռահելով այդ ամէնը, հրաւէրին չպատասխանեց, նա մտածեց մի այլ ձեւով խաբել նրան»[82]:

Արտաւազդին որոգայթի մէջ ձգելու նպատակով Անտոնիոսը նրա մօտ ուղարկեց Քուինտոս Դելլիոսին՝ խնդրելով հայոց արքայի դստերը կնութեան տալ Կլէոպատրայից ծնուած իր որդի Ալեքսանդրին, բայց ապարդիւն: Այնժամ Անտոնիոսը ժամանեց Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքը եւ վերստին Արտաւազդին հրաւիրեց իր մօտ, բայց այս անգամ եւս վերջինս «կասկածելով դաւադրութեան մասին, նրա մօտ չժամանեց»: Ուստի Անտոնիոսը շարժուեց դէպի Արտաշատ եւ Արտաւազդին «իբրեւ բարեկամի նամակ գրելով եւ ամէն միջոց գործադրելով, նրան հարկադրեց գալ իր ռազմական ճամբարը»[83]: Արտաւազդն այլընտրանք չունէր նաեւ այս անգամ, քանի որ հռոմէական զօրքը վերստին մտել էր Հայաստան՝ պարթեւների դէմ արշաւելու համար: Դիմադրել Անտոնիոսին կը նշանակէր հանդէս գալ իբրեւ պարթեւների դաշնակից եւ պատերազմական դրութիւն ստեղծել Հայաստանի ու հռոմայեցիների միջեւ՝ ծանր իրավիճակ ստեղծելով իր երկրում: Այս անգամ եւս նա գերադասեց չէզոք դիրքորոշումը, ինչը ձեռնտու չէր Անտոնիոսին, որն, ըստ երեւոյթին, արդէն կասկածում էր հայոց արքայից, Օկտաւիանոսի հետ նրա ունեցած կապերի համար[84]: Դիոն Կասսիոսը գրում է, որ Օկտաւիանոսը կարեկցում էր Արտաւազդին եւ «գաղտնաբար կապեր էր հաստատել նրա հետ Անտոնիոսի դէմ»[85]: Վերջինիս եւ Ատրպատականի թագաւորի միջեւ եղած դաշինքն ուղղուած էր ոչ միայն Պարթեւաստանի, այլեւ Օկտաւիանոսի դէմ[86], որը հարկ է, որ դրան հակադրէր Հայաստանի հետ իր դաշինքը: Անտոնիոսի յաղթանակը պարթեւների դէմ ձեռնտու չէր

Օկտաւիանոսին, քանի որ մեծացնելու էր իր ախոյեանի ազդեցութիւնը ոչ միայն Արեւելքում, այլեւ Իտալիայում։

Անտոնիոսը հաշուեյարդար տեսաւ Սեքստոս Պոմպէոսի՝ իր ահարկու հակառակորդի հետ, որը, ինչպէս վկայում է Ապպիանոսը, «պատուիրակներ ուղարկեց Թրակիայի, Պոնտոսի եւ Հայաստանի թագաւորների, ինչպէս նաեւ պարթեւների մօտ, յոյս ունենալով, որ Անտոնիոսի դէմ գալիք պատերազմի ժամանակ նրանք հաճութեամբ կ'ընդունեն հռոմէական զօրավարին, յատկապէս որ նա որդին էր Մեծն Պոմպէոսի»։ Ընդսմին Սեքստոս Պոմպէոսը յոյս ունէր, որ Անտոնիոսից պարտութիւն կրելու դէպքում, կարող է ապաստանել նաեւ Հայաստանում[87]։

Միայն Պոմպէոսը չէր, որ պայքարում էր Անտոնիոսի դէմ։ Վերջինիս նկատմամբ հակադիր դիրքորոշում ունէին նաեւ Կապադովկիայի Արիարաթէս Ե. թագաւորը, Իտուրեաների արքայ Լիւսանիասը, որոնց Անտոնիոսը մեղադրեց պարթեւներին զօրակցելու համար եւ գահընկեց արեց. Լիւսանիասն սպանուեց նրա հրամանով[88]։ Արեւմուտքում ստեղծուած անբարենպաստ պայմաններն Անտոնիոսին ստիպեցին հրաժարուել պարթեւների դէմ արշաւելուց։ Դրա փոխարէն նա բռնի կերպով Արտաւազդից կորզեց մեծագումար հարստութիւն եւ թագաւորական գանձերը։ Միաժամանակ, Անտոնիոսը կալանեց Արտաւազդին, Հայաստանը համարեց իր կողմից նուաճուած եւ նրա եղերաբախտ թագաւորին՝ դնելով արծաթէ շղթաների մէջ, տարաւ Ալեքսանդրիա։

Փաստօրէն Անտոնիոսի այս անգամուայ արշաւանքն ուղղուած էր ոչ այնքան պարթեւների, որքան Հայաստանի դէմ։ Դիոն Կասսիոսը գրում է, որ 35ին Անտոնիոսն «արշաւանք ձեռնարկեց Արտաւազդ Արմէնի դէմ»[89]։ Ստեղծուած պայմաններում, նա վստահ չէր, թէ կարող է պարթեւների դէմ յաղթանակի հասնել։ Բայց նրան յաղթանակ էր պէտք Ալեքսանդրիայում կայանալիք յաղթահանդէսի համար։ Հայաստանը նուաճուած յայտարարելու փաստը յաղթողի փառապսակ էր հիւսելու նրա փառատենչ գլխին՝ բարձրացնելով նրա վարկը Եգիպտոսում, անձամբ՝ նրա թագուհու մօտ, որին Անտոնիոսը կամենում էր ներկայանալ իբրեւ յաղթապանծ հերոս։ Բացի այդ, նրան անհրաժեշտ էր նաեւ Եգիպտոսի ֆինանսական աջակցութիւնն ընդդէմ Օկտաւիանոսի[90]։ Ի տրիտուր այդ օգնութեան, Անտոնիոսը կատարում էր Կլէոպատրայի բոլոր ցանկութիւնները։ Ըստ մ.թ. Ա. դարի հրեայ պատմիչ Յովսեպոս Փլաւիոսի, Անտոնիոսը վաղուց տուայտում էր Կլէոպատրայի սիրուց եւ լիովին ստրկացուած էր կրքից։ Մինչդեռ Կլէոպատրան իր արիւնռուչտութիւնն ուղղել էր ուրիշ երկրների վրայ եւ ջանում էր Անտոնիոսի օգնութեամբ տիրանալ Ասորիքին,

Հրէաստանին եւ Արաբիային: Նա նոյնիսկ ուղեկցել էր Անտոնիոսին 35ի Հայաստանի դէմ նրա ձեռնարկած արշաւանքի ժամանակ՝ հասնելով Եփրատի ափերը: Պատմագիրը նաեւ հաւաստում է, որ Անտոնիոսը անշեղօրէն կատարում էր Կլէոպատրայի բոլոր պահանջները՝ Հայաստանից «որպէս նուէր բերելով Տիգրանի որդի Արտաբազէսին ... բոլոր դրամների եւ (պատերազմական) ամբողջ աւարի հետ միասին»[91]:

Ե. դարի հայոց պատմահայր Մովսէս Խորենացին, որ հաւանաբար օգտուել է Յովսեպոս Փլաւիոսից, այս մասին գրում է. «Մոռնչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնիոս, առաւել եւս թունեալ ի Կղէոպատրայ, քանզի քէն պահէր վասն լկանաց իւրոյ հանոյն, որ ի Տիգրանայ. եւ ոչ միայն Հայոց, այլ բազմաց այլոց թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց: Սակս որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնիոս՝ ի Կղէոպատրայ հաւատայ զնոցա իշխանութիւնս...: Եւ դարձեալ յԵգիպտոս, պարգեւէ զԿղէոպատրայ զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին»[92]:

Սակայն, նշում է գերմանացի պատմաբան Հերման Բենգտսոնը, Անտոնիոսն «անտեսեց քաղաքացիական այն արիութիւնը, որ հանդէս բերեց հայոց թագաւորը, կտրուկօրէն հրաժարուելով ստորանալ նրա առջեւ, ուստի Կլէոպատրան դա չներեց նրան»[93]: Ի հարկէ, վերջինս՝ Արտաւազդի հանդէպ թշնամանք տածելով, առաջնորդւում էր աւելի ազդու քաղաքական շահախնդրութեամբ՝ առաջին հերթին ելնելով այն փաստից, որ Եգիպտոս վերադարձած Անտոնիոսը Կլէոպատրային հռչակեց Եգիպտոսի, Կիպրոսի, Աֆրիկայի եւ Կելէ-Սիրիայի[94] թագուհի, իսկ նրանցից ծնուած իր մանկահասակ որդիներին՝ արքայից արքաներ, նրանցից աւագին՝ Ալեքսանդրին կարգելով Մեծ Հայքի, Ատրպատականի եւ Պարթեւաստանի թագաւոր, իսկ կրտսերին՝ Պտղոմէոսին՝ Փիւնիկէի, Ասորիքի եւ Կիլիկիայի տիրակալ[95]: Ընդսմին նա Ալեքսանդրին զարդարեց հայկական եւ մեդական շքազգեստով, խոյրով ու կօշիկներով, նրան թիկնապահներ նշանակելով հայ զօրականների[96]:

Այդպիսով պարթեւների դէմ մղած պատերազմում չարաչար պարտութիւն կրած Անտոնիոսը ջանում էր այն տպաւորութիւնն ստեղծել, թէ տէր է դարձել ոչ միայն Հայաստանին, այլեւ Ատրպատականին ու Պարթեւաստանին: Պլուտարքոսը գրում է, որ նոյնիսկ Օկտաւիանոսը համոզուած էր, որ արդէն Անտոնիոսի «տրամադրութեան տակ են Մարաստանը (այսինքն՝ Ատրպատականը — Վ.Վ.) եւ Պարթեւաստանը, որոնք նրանք (այսինքն՝ Անտոնիոսի զինուորները — Վ.Վ.) միացրել են Հռոմէական տէրութեանը»[97]: Սակայն, 32ի ամրանը Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ սկսուած պատերազմը յոգս էր ցնդեցնելու

Անտոնիոսի ու Կլէոպատրայի քաղաքական մտայղացումները, քանզի Անտոնիոսն ստիպուած իր զօրքերը դուրս հանեց Հայաստանից ու Ատրպատականից, որով իսկ «Հայաստանը Մեդիայի հետ միասին կորսուեց»[98]: 31ին Պարթեւաստանում ծայր առան գահակալական կռիւներ՝ ծանր կացութեան մէջ դնելով Հրահատ Դ.ին[99]: Հաւանաբար, Կլէոպատրան փորձեց օգտուել յարմարադէպ պահից եւ վերականգնել Ատրպատականի թագաւորի ու Անտոնիոսի միջեւ եղած դաշինքը: Այն իրական գետնի վրայ դնելու յոյսով, Կլէոպատրան գլխատել տուեց կալանակեաց Արտաւազդին՝ նրա գլուխն ուղարկելով Արտաւազդ Մեդացուն «իբրեւ թէ այդ եղանակով նրանից օգնութիւն ստանալու յոյսով»,- գրում է Դիոն Կասսիոսը[100]: Ունա՛յն յոյս. Հռոմի ծերակոյտն արդէն պատերազմ էր յայտարարել հենց իրեն՝ Եգիպտոսի այդ փառատենչ տիրուհուն՝ ելնելով այն փաստից, որ նա իշխում էր նաեւ Անտոնիոսին[101]: Երկուսն էլ ունեցան անփառունակ վախճան: Հայաստանը մնաց անկախ՝ անշուշտ շնորհիւ Արտաւազդի դիւանագիտական շրջահայեացութեան, մինչդեռ անցեալում հզօր Եգիպտոսը վերջնականապէս նուաճուեց՝ վերածուելով հռոմէական նահանգի:

Այսպիսով, Հռոմի եւ պարթեւական Իրանի միջեւ ընթացող ռազմա-քաղաքական մրցակցութեան ու զինաբախումների պայմաններում, հայոց Արտաւազդ Բ. թագաւորը կարողացաւ վարել իր երկրի շահերից բխող ինքնուրոյն քաղաքականութիւն: Դիւանագիտական ստոյգ հաշուարկներով նա ի դերեւ հանեց ժամանակի հզօրագոյն տիրակալների մտայղացումները, հնարաւորինս ապահովելով Մեծ Հայքի անվտանգութիւնը եւ ինքնուրոյնութիւնը: Արտաւազդի դիւանագիտական գործառոյթներում թելադրողը ոչ թէ հարեւան հզօր տէրութիւնների քաղաքական հաշիւներն էին, այլ իր երկրի անվտանգութիւնը եւ ամբողջականութիւնը պահպանելու մտահոգութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Այս եւ յետագայ բոլոր տարեթուները նշուած են մինչփրկչական թուականով:

[2] Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմութիւն, թարգմանեց Եւդ. Ա. Միրզախանեան. խմբագրեց՝ Ստ. Ա. Ներսիսեան, Երեւան, Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1951, էջ 460:

[3] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, կազմեց, հին յունարէնից թարգմանեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց՝ Սիմոն Գրքաշարեան, Երեւան, «Մարգիս Խաչենց», 2001, էջ 268:

[4] Նոյն, էջ 116-117:

[5] Նոյն, էջ 117: Տե՛ս նաեւ Յովսեպոս Փլաւիոս. Դիոն Կասսիոս, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Մ. Կրկեաշարեանի, Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին, 9, Հին Յունական Աղբիւրներ, Ա, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 155: Ըստ խոսքացի պատմաբան

Գ. Ֆերերոյի, Հռոմում «հետզհետէ հասարակութիւնը սկսեց ոգեւորութեամբ վերաբերուել Կրասսոսի այդ ծրագրին» եւ լոկ պահպանողականների մի մասը կանխատեսեց, որ պատերազմը անյաջող վախճան է ունենալու, «քանի որ երկիրը հեռու էր եւ անյայտ, իսկ ոսոխը՝ սարսափելի», տե՛ս՝ G. Ferero [G. Ferrero], *Velichie i padenie Rima* [Հռոմի Մեծութիւնը եւ Անկումը], հ. II, Մոսկուա 1916, էջ 67։ «Ճակատագիրը,- շարունակում է նոյն հեղինակը,- Կրասսոսին ընտրեց որպէս առաջին զոհ, ի դին մեծագործութիւնների այն մոլուցքի, որն ալեկոծում էր Իտալիան», տե՛ս՝ նոյն, էջ 91։

[6]Մ.թ. Բ. դարի յոյն հռոմէական պատմիչ Ապպիանոսը Կրասսոսի զօրքերի թուաքանակը հասցնում է 100 հազարի, տե՛ս՝ Appian, *Grazhdanskie voini* [Քաղաքացիական կռիւներ], Լենինգրադ, 1935, 2, 18։ Ըստ յոյն պատմագիր Պլուտարքոսի, Կրասսոսն ունէր մօտ 50 հազարանոց բանակ՝ եօթ լեգէոն, 4000անոց այրուձի, նոյնքան թեթեւազէն զօրաբաժին եւ Միջագետքում տեղակայուած կայազօրներ՝ թուով 7 հազարանոց հետեւազօր եւ 1000 հեծեալներ, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 118։ Ուսումնասիրողներն աւելի են նուազեցնում Կրասսոսի զօրքի թուաքանակը, նշելով 35 հազար (տե՛ս՝ G. Rawlinson, *The Sixth Great Oriental Monarchy*, New York, 1873, p. 155) կամ 42 հազար (տե՛ս՝ N. C. Debevoise, *A Political History of Parthia*, Chicago, 1938, p. 3)։ Պատմաբան Յակոբ Մանանդեանը Կրասսոսի զօրքի թիւը հասցնում է 42-44 հազարի, տե՛ս՝ Յակոբ Մանանդեան, Երկեր, հ. Ա., Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 250։

[7]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 118-119։

[8]Նոյն, էջ 119։ Տե՛ս նաեւ՝ Iosif Flavii [Յովսեպոս Փլաւիոս], *Iudeiskaia voina* [Հրէական Պատերազմը], Մինսկ, 1991, էջ 36։

[9]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 119-120։ Հին յոյն աշխարհագրագէտ եւ պատմաբան Ստրաբոնը գրում է, որ պարթեւներն սկզբում փնտռում էին հռոմայեցիների բարեկամութիւնը, սակայն երբ Կրասսոսը պատերազմ սկսեց, նրանք էլ սկսեցին պատերազմին պատասխանել պատերազմով, տե՛ս՝ Մարտիրոս, քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան, Օտար Աղբիւրներ Հայերի Մասին, Յունական Աղբիւրներ, No. 1, Երեւան, Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1940, էջ 93։

[10]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 121։

[11]Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա. Պատմութեան Ինստիտուտ, Հայ ժողովրդի Պատմութիւն, հ. I, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1971, էջ 606։

[12]Ռուբէն Մանասերեան, Հայաստանը Արտաւազդից Մինչեւ Տրդատ Մեծ. Արտաքին Քաղաքականութիւն, Պետական Գաղափարաբանութեան Պրոբլեմներ եւ Քրիստոնէութեան Ընդունում, Երեւան, «Արեգ», 1997, էջ 11-13։

[13]Նոյն, էջ 15։

[14]Դիոն Կասսիոս, էջ 158։

[15]F. Stark, *Rome on the Euphrates: The Story of a Frontier*, London, 1966, pp. 119-121.

[16]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 143։

[17]Նոյն, էջ 125։ Պլուտարքոսն ուղղակի նշում է, որ Արտաւազդը «մեծ պատերազմի է բռնուել Հերոդէսի (այսինքն՝ Օրոդէսի – Վ.Վ.) Հայաստան ներխուժման պատճառով»։ Ի ապացուցուած այն կարծիքը, որ իբր պարթեւները յաղթանակ են տարել «Կրասսոսի եւ Արտաւազդի դէմ, եւ հայ-պարթեւական դաշինքով վերջինս կախման մէջ է ընկել Օրոդէս արքայից», տե՛ս՝ A. Bokshchanin, *Parfia i Rim* [Պարթեւաստանը եւ Հռոմը], հ. II, Մոսկուա 1966, էջ 60-61։ Նկատենք, որ նշուած դաշինքով Օրոդէսը Հայաստանին է վերադարձրել հիւսիսային Միջագետքի վիճելի տա-

բանքները (տե՛ս՝ նույն, էջ 61)՝ լռելյան համաձայնությամբ «արքայից արքայ» տիտղոսն Արտաւազդի կրելու փաստի հետ։ Նշենք նաեւ, որ վերջինս ապաստան է տուել Կրասոսի ջախջախուած զօրքի մի մասին (տե՛ս՝ Դիոն Կասսիոս, էջ 165), ինչը նոյնպէս ապացոյց է հայոց թագաւորի քաղաքական ինքնուրոյն ուղեղծի։

[18]Մանասերեան, էջ 16-18։

[19]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 122 վկայում է, որ Խառանի ճակատամարտի նախօրեակին հռոմէական զօրաջիններն այնքան վստահ էին մօտալուտ յաղթանակի նկատմամբ, որ համակուլցին քամահրանքով պարթեւների հանդէպ եւ կարծում էին թէ նրանք չեն համարձակուի մարտի մէջ մտնել իրենց հետ։

[20]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-125։

[21]Stark, p. 116.

[22]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-126։ Հռոմայեցի պատմագիրները եւ նրանց հետեւողութեամբ որոշ ուսումնասիրողներ Կրասոսի պարտութեան մեղքը բարդում են Աբգարի վրայ՝ ընդգծելով նրա «գաւառանական վերաբերմունքը» Կրասոսի նկատմամբ, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-125. Դիոն Կասսիոս, էջ 160-162. M. Diakonov, *Ocherk istorii drevnego Irana* [Ուրուագիծ Հին Իրանի Պատմութեան], Մոսկուա 1961, էջ 212. Stark, p. 117 եւն.։ Սակայն, աւանդական այս կարծիքը, ինչպէս ճիշտ նշում է Մանանդեանը, «էլէ հաստատուում աղբիւրների վկայութիւնների ուշադիր քննութեամբ», տե՛ս՝ Մանանդեան, էջ 248։

[23]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 135։

[24]*The Cambridge History of Iran*, vol.3 (1), Cambridge,1983, p. 54.

[25]Դիոն Կասսիոս, էջ 164։

[26]Plutarchus, *Crassus*, 39։

[27]Ferrero, էջ 101:

[28]H. Bengtson, 'Zum Partherfeldzug des Antonius' [Անտոնիոսի Պարթեւական Արշաւանքի Մասին], տե՛ս՝ *Philos.-Hist. Kleine Sitzungsberichte* [Փիլիսոփայական-Պատմական Կարճ Տեղեկագրեր], H. 1, München, Bayerisch Akademie der Wissenschaften, 1974, էջ 4։

[29]*Cambridge History of Iran*, p. 56.

[30]Դիոն Կասսիոս, էջ 165։

[31]Cicero, *Epistola ad familiares*, 15, 2։

[32]S. Utchenko, *Tsitseron i ego vremia* [Կիկերոնը եւ Նրա Ժամանակը], Մոսկուա, 1972, էջ 241։

[33]Մանանդեան, էջ 251-252։ Բայց գիտնականի այս կարծիքը վիճարկելի է- տե՛ս՝ Մանասերեան, էջ 20։

[34]Դիոն Կասսիոս, էջ 165։ Յովսեպոսն այս արշաւանքի ժամանակ պարթեւների զօրապետ է յիշում Բարզափռանէսին. տե՛ս՝ Յովսեպոս Փլաւիոս, էջ 37, 68։

[35]G. Khalatiants, *Ocherk istorii Armenii* [Հայաստանի Պատմութեան Ակնարկ], Մոսկուա, 1910, էջ 230։ Մանանդեանը հաւանական է համարում այս կարծիքը- տե՛ս՝ Մանանդեան, էջ 252։ Բայց Վասակը բուն պարսկական անուն է, որը լատիներէնում տառադարձուած է Vasaces ձեւով. տե՛ս՝ Հ. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հատոր Ե, Երեւան, 1962, էջ 43։

[36]Appian, 2, 71։ Ըստ Պլուտարքոսի, Պոմպէոսը կամենում էր օգնակոչ ուղղել նաեւ պարթեւներին, բայց նրա կուսակիցները դէմ եղան այդ առաջարկին եւ ի վերջոյ որոշեցին մեկնել Եգիպտոս, տե՛ս՝ Պլուտարքոս, Երկեր, Երեւան, «Հայաստան», էջ 301։

[37]Պլուտարքոս, Երկեր, էջ 170։

[38] A. Egorov, *Rim na granits epokh* [Հռոմը Դարաշրջանների Սահմանագծում], Լենինգրադ, 1985, էջ 73։

[39] Ըստ Պլուտարքոսի, Յուլիոս Կեսարը Պարթևաստանը գրաւելուց յետոյ մտադրուել էր մտնել Վրկանք եւ շարժուելով Կասպից ծովի ափեզերքով, շրջանցել Պոնտոսը եւ խուժել Սկիւթիա, ապա դիմել Գերմանիայի ու նրան դրացի երկիրների վրայ եւ Գալիայով վերադառնալ Իտալիա, հռոմէական տիրապետութեան ոլորտները բոլոր կողմերից եզերելով ովկիանոսով, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 250։

[40] Appian, 3, 78; 4, 60, 62-63։

[41] Նոյն, 4, 60։ Ըստ երեւոյթին, պարթեւները կողմ չէին հանրապետականների արագ յաղթանակին, ինչը վերջ կը դնէր Հռոմում քաղաքացիական պատերազմին։ Երբ Գայիոս Կասսիոսը պատուիրակներ ուղարկեց Օրոդէսի մօտ՝ խնդրելով վերատին օժանդակ զօրամիաւորում ուղարկել Ասորիք՝ հանրապետականների զօրակցելու համար, պարթեւների արքան չընդառաջեց նրանց (տե՛ս՝ նոյն, 4, 63), անշուշտ, չկամենալով, որ նրանք հաստատուեն Ասորիքում։

[42] Appian, 4, 63։

[43] Նոյն, 4, 80։

[44] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 290. տե՛ս նաեւ՝ Դիոն Կասսիոս էջ 172-173։

[45] Արտաւազդի կանխատես վերաբերմունքն, ինչպէս տեսանք, իրական յեռանախորք ունէր. պարթեւները պարտութիւն կրեցին։

[46] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 290-291։

[47] V. Parfenov, *Rim ot Tsezaria do Avgusta* [Հռոմը Կեսարից Մինչեւ Օգոստոս], Սարատով, 1987, էջ 15։

[48] I. Shifman, *Tsezar Avgust* [Կեսար Օգոստոսը], Լենինգրադ, 1990, էջ 60-62։

[49] T. Momzen [T. Mommsen], *Istoriia Rima* [Հռոմի Պատմութիւն], հ. 5, Մոսկուա, 1949, էջ 328։

[50] Parfenov, էջ 112։

[51] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294. Դիոն Կասսիոս, էջ 177։

[52] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294-295։

[53] Դիոն Կասսիոս, էջ 178։ Այդ դաշինքը եղել է հարկադրական, ինչը հաւաստւում է Պլուտարքոսի վկայութեամբ, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 291։

[54] Ուշագրաւ է, որ նոյն 37 թուականին Արտաւազդի թողարկած արծաթեայ դրամի վրայ նա կրում է հարքայից արքայ տիտղոսը, հաստատածայինս մեծաբուժով։ Այս դրամի վրայ նշուած է Արտաւազդի գահակալման 18-րդ տարին, այսինքն՝ 37 թիւը, որը նաեւ դրամի հատման ժամանակն է ազդանշում, տե՛ս՝ Խաչատուր Մուշեղեան, «Արտաւազդ II-ի Զորեքդրամեանը», Պատմա-Բանասիրական Հանդէս, թիւ 2 (25), 1964, էջ 320-322։

[55] Ենթադրւում է, որ Ատրպատականի Արտաւազդ թագաւորը այս ժամանակ դիմել է Անտոնիոսին, որպէսզի վերջինս զօրակցի իրեն ընդդէմ Հրահատ Դ-ի, որի հետ նա բախումների մէջ էր. տե՛ս՝ Bokshchanin, էջ 108։ Սակայն, 36-ին նման առաջարկով Արտաւազդ Մեղացին չէր դիմի Անտոնիոսին, քանի որ վերջինս առաջին հերթին սպառնում էր Ատրպատականին։ Ուստի աւելի հաւանական էր Ատրպատականի եւ պարթեւ արքաների դաշինքն ընդդէմ ահեղ հակառակորդի. տե՛ս՝ Ferero, էջ 306; Debevoise, pp. 106-107։

[56] Bengtson, էջ 6-9; Bokshchanin, էջ 109-110։ Այս կարծիքը վիճարկւում է. տե՛ս՝ Մանասերեան, էջ 24-25։ Պլուտարքոսի հաւաստմամբ, Անտոնիոսը խրատել էր Կեսարի գրաւոր ժառանգութիւնը, այդ թւում՝ նրա մտադրությունները. տե՛ս՝ Plutarchus,

Antonius, 15։ Ուստի, անհաւանական չէ, որ նա օգտուած լինէր Կեսարի յղացած պարթեւական արշաւանքի պլանից։

[57]Դիոն Կասսիոս, էջ 187։ Այդուհանդերձ Արտաւազդը ստիպուած էր զօրք տրամադրել Անտոնիոսին, քանզի այլ ելք չունէր։ Բայց նա գրեթէ երեք անգամ պակաս զօրուժ դրեց Անտոնիոսի տրամադրութեան տակ, քան ժամանակին ուղարկել էր Կրասսոսին։

[58]Bengtson, էջ 32։

[59]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294։ Պատմագրի հաւաստմամբ, Անտոնիոսն ունէր 60 հազարանոց հետեւակազօր, տասը հազարի հասնող խպանական եւ կելտական այրուձի եւ դաշնակիցների տրամադրած 30 հազարանոց զօրքը, որից 13 հազարը (6 հազար հեծեալ եւ 7 հազար հետեւակ) հայկականն էր։ տե՛ս՝ նոյն։ Գերմանացի պատմաբան Թէոդոր Մոմզէնը գրում է, որ Արեւելքում Հռոմը երբեք չէր ունեցել այդքան մեծաթիւ եւ ուժեղ զօրք, որը ըստ նրա, ունէր 70 հազարի հասնող հետեւակազօր, 40 հազար օժանդակ ոյժեր, չհաշուած 10 հազարանոց խպանական եւ գալլական հեծելազօրը, 6 հազարանոց հայկական այրուձին։ տե՛ս՝ Momzen, էջ 328։ Պատմաբան Հրանդ Քոչարեանը Անտոնիոսի զօրքերի թիւը հասցնում է 100 հազարի։ տե՛ս՝ Հրանտ Քոչարեան, «Արտաւազդ Բ եւ Անտոնիոս», Պատմա-Բանասիրական Հանդէս, թիւ 3 (22), 1963, էջ 199։ Մէկ այլ կարծիքի համաձայն, Անտոնիոսն ունէր 16 լեգէոն հետեւակազօր, 10 հազարանոց այրուձի եւ 30 հազարի հասնող օժանդակ ոյժեր, մինչդեռ պարթեւների զօրքի թիւը չէր անցնում 50 հազարից, տե՛ս՝ Egorov, էջ 83։

[60]Հմմտ. Bengtson, էջ 23-24։ Ըստ Մանանդեանի, Անտոնիոսի զօրքի արշաւուղին ձգւում էր դէպի արժմեան Քէօփրիքէօյը (հին Վաղարշաւան), ապա Այրարատի Դաշտ եւ այնտեղից Հայկական Պարի հարաւային կողմով հասնում էր Հէր, որտեղից շարունակւում էր դէպի արժմեան Տասուիջ եւ Ուրմիա լիճի արեւելեան ափերով հասնում Փրաատպա։ տե՛ս՝ Մանանդեան, էջ 260։ Վերջինիս տեղադրութիւնը դեռեւս մնում է անորոշ։ Այն սովորաբար տեղորոշուել է արժմեան Թախտի Սուլէյման աւանի տեղում, բայց ռուս արեւելագէտ Վլադիմիր Մինորսկու կարծիքով այն պէտք է դտնուէր արժմեան Մարազայի տեղում։ այս մասին տե՛ս՝ The Cambridge History of Iran, էջ 63-64; Մանասերեան, էջ 29, ծանօթ. 1։

[61]Bengtson, էջ 31։

[62]Momzen, էջ 331-332։

[63]Դիոն Կասսիոս, էջ 178։

[64]Մանասերեան, էջ 31։

[65]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 295-297։ Դիոն Կասսիոս, էջ 179։

[66]Դիոն Կասսիոս, էջ 179։

[67]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 296։

[68]Ստրաբոն, էջ 49։

[69]Նոյն, էջ 46, 48։ Տե՛ս նաեւ՝ Momzen, էջ 334։ Մանանդեան, էջ 265։ The Cambridge History of Iran, էջ 59։ Ինչպէս տեսանք, ըստ Պլուտարքոսի, Արտաւազդը կէս ճանապարհից ետ քաշեց իր ոյժերը, քանզի համոզուած էր Անտոնիոսի պարտութեան մէջ։ Արտաւազդի այդ քայլը նպատակ չունէր վնասել հռոմայեցիներին։ Այն հարկադրական ձեռնարկում էր՝ թելադրուած ստեղծուած իրավիճակով։ Պարթեւատրպատականեան զօրքն արդէն շրջափակել էր Անտոնիոսի զօրքին, եւ Արտաւազդը նրան միանալու համար պէտք է ճեղքէր պաշարման օղակը, իր զօրականներին մատնելով արհաւիրքների։ Ուստի միակ ճիշդ ելքը Հայաստան վերադառնալն էր։ Այս մասին տե՛ս՝ S. Ter-Israelian, 'K voprosu o prichinakh vozvrasheniia

armianskoi konnitsi vo vremia Parfianskogo pokhoda M. Antonii' [Մ. Անտոնիոսի Պարթեւական Արշաւանքի ժամանակ Հայկական Հեծելազօրի Վերադարձի Ճարժանքների Մասին], Գիտական Աշխատութիւններ Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի (Հասարակական Գիտութիւնների Բաժին), հ. 2, Երեւան, 1967, էջ 235-242։

[70]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 299-300. Դիոն Կասսիոս, էջ 180։

[71]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 300։

[72]Նոյն, էջ 305։

[73]Նոյն, էջ 309։

[74]Պլուտարքոսի վկայութեամբ, հենց որ Հռոմայեցի զինուորները մօտեցան Հայաստանի սահմաններին, պարթեւները դադարեցրին նետաձգութիւնը. տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 309։

[75]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 309։

[76]Հմմտ.՝ Յ. Ասատուրեան, Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմայ 190էն Ն.Ք. մինչեւ 429 Յ. Ք., Վենետիկ 1912, էջ 111. Արմէն, «Արտաւազդ Բ եւ Անտոնիոս», էջ 202։

[77]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 311։

[78]Նոյն, էջ 311-312։

[79]Նոյն, էջ 312։

[80]Նոյն, էջ 313։

[81]Դիոն Կասսիոս, էջ 185։

[82]Նոյն։

[83]Նոյն, էջ 186։

[84]Cambridge History of Iran, էջ 65։

[85]Դիոն Կասսիոս, էջ 187։

[86]Cambridge History of Iran, էջ 65։ Դիոն Կասսիոսը գրում է, որ Անտոնիոսն ու Արտաւազդ Մեդացին «պայմանաւորուեցին իրար օգնել, մէկը՝ պարթեւների դէմ, իսկ միւսը՝ (Օկտաւիանոս) Կեսարի դէմ, եւ այդ առնչութեամբ էլ իրար փոխադարձաբար որոշ թուով զինուորներ տուեցին. եւ [Մեդացին] ստացաւ նորանուաճ Հայաստանից որոշ մասերդ, տե՛ս՝ Դիոն Կասսիոս, էջ 188։ Գերմանացի պատմաբան Հերման Բենգասոնի կարծիքով, Անտոնիոսը համոզուած չէր, թէ հայերն ու պարթեւները կարող են դաշնակցել Օկտաւիանոսի հետ, տե՛ս՝ Bengtson, էջ 48։

[87]Appian, 5, 133։

[88]Դիոն Կասսիոս, էջ 184։

[89]Նոյն։

[90]M. Grant, *The Twelve Caesars*, New York, 1975, p. 56։

[91]Յովսեպոս Փլաւիոս, էջ 42։

[92]Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան ու Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 138։

[93]G. Bengtson, *Praviteli epokhi ellenizma* [Հելլենիստական Դարաշրջանի Կառավարիչները], Մոսկուա, 1973, էջ 351։

[94]Հնադարում Կելէ-Սիրիա անուան տակ նկատի էին առնում հարաւային Ասորիքը՝ Պաղեստինի հետ միասին։ Վերջինս վաղուց ի վեր Եգիպտոսի տիրակալ Պտղոմէոսեաններն եւ Ասորիքի տիրակալ Սելեւկեանների միջեւ արիւնոտ բախումների պատճառ էր դառնում։

[95]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 315։

[96]Նոյն։

[97]Նոյն, էջ 316։

[98]Դիոն Կասսիոս, էջ 188։ Մոմզէնի կարծիքով 30ին Արտաւազդի որդի Արտաշէս Բ. (30-20) դարձաւ Հայաստանի եւ Ատրպատականի թագաւոր, երբ պարթեւները ջախջախեցին Ատրպատականի զօրուժը Բայց նրա յաջորդ Տիգրան Գ-ի (20-մօտ 8) գահակալութեան սկզբում Ատրպատականը անջատուեց Հայաստանից՝ Հռոմի Օգոստոս կայսրի (ապագայ՝ Օկտաւիանոսի) կամքով, տե՛ս՝ Momzen, էջ 336, 363։ Տե՛ս նաեւ՝ Մանանդեան, էջ 286-287։

[99]Debevoise, pp. 133-135.

[100]Դիոն Կասսիոս, էջ 189։

[101]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 317-318։

KING ARTAVAZD II OF ARMENIA IN THE DIPLOMATIC INTRICACIES OF ROMAN-PARTHIAN WARS (Summary)

VREJ VARDANIAN

The author argues that during the early period of Roman and Parthian military-political rivalry and armed conflict in Western Asia in the second half of the first century BC, the king of Armenia, Artavazd II (55-34 BC), managed to pursue an independent policy based on the interests of his country and subjects. He succeeded to a large extent in keeping his country away from the expansionist desires of these two great powers of the era. The article is based on the works of classical authors like Plutarch, Appian, Cassius Dio, Flavius Jospehus and Cicero. It also makes extensive use of the available secondary literature on this subject in Armenian, Russian, English and German.